

րիլ, ըստ այնմ՝ Լարեա՛, պատրաստեա՛, ուղղեա՛, զի ուղղութիւն սիրեաց զքեզ եւ թագաւորեա՛ ի վերայ արտից աստուածատեցից վասն ճշմարտութեան, հեղութեան եւ արգարութեան, զոր մարգարէն այլովք ի վերայ տնտեսութեան անարատի եւ անմեղի Տեառն մերոյ վկայեալ նախագուշակէր, որպէս Պօղոս ասէ Ձի նման նմա լինելոց եմք որպէս եւ էն, եթէ ընդ նոյն ճանապարհ ընթացուք: Ձի որպէս եւ աւետարանիչն վկայէ թէ Յիսուս առնէր եւ ուսուցանէր, եւ այն՝ զոր ասէ եւ ոչ առնէ, լո՛ւր զի փոքր այսինքն հիչ եւ չիք կոչեսցի յարքայութեան երկնից: Ձի տեսեալ զգործս ձեր բարիս փառաւորեսցեն զհայր ձեր որ յերկինս է, ասէ Տէրն: Ձի զուք էք աղ երկրի, դուք էք լոյս աշխարհի, վասն որոյ եւ պարտ է քարոզացդ լինիլ կատարեալ, որպէս եւ Հայր ձեր երկնաւոր կատարեալ է: Որպէս սրբազան աշակերտն Յոհաննէս՝ սիրելին Քրիստոսի յաւանդման հոգւոյն ասէր. Ո՛ր հայիլն ի կին մարդ ծանր գրեցեր, այսինքն զչնութիւն ի սրտի ցանկացողին: Եթէ արտից մեղաց յաղթեմք՝ զախտս մարմնոց մարդկան բուժեմք. եթէ զօրէնս կատարեմք՝ ապա քարոզ լինիլ կարեմք: Եւ այս եւս բռամբ յափշտակի եւ ոչ խըտբանօք գայ արքայութիւն Աստուծոյ. քանզի որ կարողն է տանիլ՝ տարցէ. եւ Ոչ են այսմ ամենայնի բաւական, այլ որոց տուեալն է ի Հօրէն իմմէ, ասէ Տէրն. Ձի բազումք են կոչեցեալք եւ սակաւք են որ մտանեն ընդ նա. Լայն եւ արծակ է ճանապարհն որ տանի ի կորուստ եւ բազումք են որք մտանեն ընդ նա: Որպէս Պօղոս առաքեալ գրէ. Ո՞չ որ ամենեքեան յասպարիզի ընթանան՝ ընթանալ ամենեքեան ընթանան, բայց մի ոմն առնու յաղթութեան պսակն: Ձի՞նչ արդեօք եւ մարգարէքն վկայեցին, որոց օրէնքն տուան ի ձեռն Մովսիսի. նոյն եւ Հօգին է որ խօսեցաւ յօ-